ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

3 ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ(Սևանի ավագ դպրոց, Գորիսի N1 ավագ դպրոց և Երևանի N42 ավագ դպրոց) ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱՆՔԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ (ԲՍԿՊ) ՄՇԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

ՀՀ Կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ն, «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակներում հայտարարում է մրցույթ 1 անհատ խորհրդատուի ընտրության համար՝ 3 ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքների համար տեղանքի բնապահպանական եվ սոցիալական կառավարման պլանների (ԲՍԿՊ) մշակման նպատակով: Խորհրդատվական ծառայությունը կիրականացվի 2018թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում:

Խորհրդատվական ծառայությունը ներառում է հետևյալ հիմնական աշխատանքները.

- Ծանոթացում ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից տրամադրվող բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթղթի (ԲԿՍՇՓ) և հիմնանորոգման հետ առնչվող փաստաթղթերի հետ,
- Հիմնանորոգման համար 3 դպրոցների շենքերի նախագծերի վերանայում, հնարավոր բնապահպանական և սոցիալական խնդիրների վերհանում, որոնք կարող են կապված լինել տեղանքի աշխատանքների հետ, ինչպես նաև դրան համապատասխան դաշտային աշխատանքների պլանավորում,
- Այցերի իրականացում վերոնշյալ 3 ավագ դպրոցներ՝ համոզվելու, որ հիմնանորոգման բոլոր աշխատանքները նախատեսված են իրականացնել դպրոցի զբաղեցրած տարածքում; հիմնանորոգվող դպրոցների տարածքներում և նրա շրջակայքում կենսաֆիզիկական միջավայրի ուսումնասիրություն,
- Նախագծային փաստաթղթերի և կատարված դաշտային աշխատանքների արդյունքների հիման վրա տեղանքի Բնապահպանական եվ սոցիալական կառավարման պլանների նախագծերի մշակում ԲՍԿՇՓ-ում ներկայացված հիմնական սկզբունքներին համապատասխան,
- Մասնակցություն ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից կազմակերպած քննարկումներին՝ կապված ԲՍԿՊ-ների նախագծերի հետ, ներգրավում տեղական շահառուներին (դպրոցի վարչակազմ, աշակերտների ծնողներ, տեղական համայնքներ և այլն)՝ ներկայացնելով անհատական նախագծային աշխատանքների բնապահպանական և սոցիալական հետևանքները, ինչպես նաև ծրագրի ազդեցության ենթարկվող մարդկանց հետաքրքրաշարժ հարցերը,
- ԲՍԿՊ-ների վերջնական տարբերակներում շահագրգիռ կողմերի դիտողությունների, ինչպես նաև ԿԾԿ ԾԻԳ-ի և Համաշխարհային Բանկի առաջարկների հաշվի առնում,
- Աջակցություն ԿԾԿ ԾԻԳ-ի գնումների աշխատակազմին՝ մշակված ԲՍԿՊ-ները մրցութային փաթեթներում ներառելու ուղղությամբ,
- Սերտ համագործակցում ԿԾԿ ԾԻԳ-ի աշխատակազմի, նախագծող խորհրդատուների, կապալառուների, տեխնիկական վերահսկողների, ՀՀ Բնապահպանության նախարարության, ՀՀ Կրթության և Գիտության նախարարության և վերոնշյալ 3 դպրոցների վարչակազմի հետ:

Թեկնածուներին ներկայացվող նվազագույն որակավորման պահանջներն են.

- Խորհրդատուի որակավորումը.
  - Բարձրագույն կրթություն բնագիտական առարկաների գծով
  - Հայերենի և անգլերենի լավ իմացություն, գրելու հմտություն
- Ընդհանուր աշխատանքային փորձը.
  - Նվազագույնը 5 տարվա փորձ «Շրջակա միջավայրի կառավարում» ոլորտում,
- Աշխատանքային փորձի համապատասխանությունը ոլորտում.
  - Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում իրականացնելու նախկին փորձ ենթակառուցվածքների զարգացման ծրագրերում (նախկինում ընդգրկվածությունը հանրային շենքերի ենթակառուցվածքային ծրագրերում կդիտվի որպես առավելություն)

Անհատ խորհրդատուն կգնահատվի հետևյալ կերպ.

- Խորհրդատուի որակավորումը – 30 միավոր,
- Ընդհանուր աշխատանքային փորձը - 30 միավոր,
- Աշխատանքային փորձի համապատասխանությունը ոլորտում – 40 միավոր:

Դիմող թեկնածուները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Նամակ-դիմում(կցվում է), որտեղ պետք է նշել մրցույթին մասնակցելու իրենց ցանկության մասին,
- Ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը,
- Կրթությունը հիմնավորող փաստաթղթեր:

Հետաքրքրված անհատ խորհրդատուներին խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի փոխառություններով և Միջազգային Զարգացման Ընկերակցության վարկերով խորհրդատուների ընտրության և վարձման ուղեցույցի» (2011թ. հունվար) պարբերություն 1.9-ին, որտեղ շարադրված է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն ՀԲ-ի խորհրդատուների ընտրության և վարձման ուղեցույցում սահմանված «Անհատ խորհրդատուների ընտրություն» մեթոդի:

Համապատասխան փորձ ունեցող մասնագետները կարող են դիմել «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ՝ ք. Երևան, Ս. Վրացյան փող. 73 հասցեով, (էլ. փոստ. cfep@arminco.com) մինչև 2018 թվականի հոկտեմբերի 8-ի, ժամը 17:00-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել վերոհիշյալ հասցեով կամ (010)57-56-90 հեռախոսահամարով:

ՀՀ ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն»
ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, Վրացյան 73

Դիմող՝ _____

_____

_____

Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցել

_____

_____

_____:

Կից ներկայացնում եմ տվյալներ իմ աշխատանքային փորձի և կրթության մասին:

Դիմող՝ _____ /_____/

(ստորագրություն)

«____» _____ 2018 թ.